ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

Թիվ 22 նիստում (11. 02. 2017թ.)

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ_____Ս.Ա. Առաքելյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ գիտաժողովների կազմակերպման ընթացակարգը:

2. ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ կամ նրա ստորաբաժանման կողմից կազմակերպվող գիտաժողովները պետք է համապատասխանեն հետևյալ չափորոշիչներին.

   2.1 Գիտաժողովի անցկացման մասին հայտարարության թվային տարբերակը պետք է նվազագույնը 1 կամ 2 ամիս առաջ տրամադրվի ԵՊՀ ԻՄ-ի կայքում տեղադրվելու համար և գործընկեր կառույցներին ուղարկելու համար:

   2.2 Գիտաժողովին մասնակցելու համար հայտերը՝ կից գիտղեկավարի կարծիք-երաշխավորագրով, պետք է ներկայացվեն ՈՒԳԸ գիտաժողովից առնվազն 50 օր առաջ:

   2.3 Հայտերի ընդունումից հետո 10 օրվա ընթացքում կազմկոմիտեն պետք է պատասխանի բոլոր հայտատուներին հայտերի (չ)ընդունվելու մասին: Հայտերի ընտրմանը պետք է մասնակցեն գիտաժողովի կազմկոմիտեում ընդգրկված նվազագույնը երեք դասախոսներ

(որոնցից երկուսը պետք է ունենան գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան):

2.4 Գիտաժողովի անցկացումից նվազագույնը 20 օր առաջ ստորաբաժանման ղեկավարը ՈՒԳԸ աշխատակազմի ղեկավարին պետք է տեղեկացնի կազմակերպչական աշխատանքներում ակնկալվող աջակցության մասին:

2.5 Գիտաժողովի անցկացումից նվազագույնը 20 օր առաջ ծրագիրը պետք է տպվի, թվային տարբերակը տրամադրվի ԵՊՀ ԻՄ կայքում տեղադրելու համար:

2.6 Բոլոր զեկուցողներին պետք է տրամադրվեն թղթապանակներ, գիտաժողովի ծրագիր, գրիչ և նոթատետր:

2.7 Գիտաժողովի ընթացքում ցանկալի է ապահովել սուրճի ընդմիջում:

2.8 Անհրաժեշտ է ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի պատշաճ ներկայացվածություն գիտաժողովին:

2.9 Գիտաժողովի անցկացումից հետո պետք է սահմանվի մեկամսյա ժամկետ՝ հոդվածի վերջնական տարբերակն ուղարկելու համար: Հավաքված հոդվածները՝ կից հեղինակների ակադեմիական կենսագրություններով, գիտական ղեկավարների կարծիքներով, եռօրյա ժամկետում (գիտաժողովի ավարտից մեկ ամիս + 3 օր հետո) ստորաբաժանման ղեկավարը պետք է տրամադրի աշխատանքները տպագրության գործընթացում ընդգրկելու համար: